

## ԱԶԳԱՅԻՆ.

Հաւան դտեալ ընդ կանոնագրութիւն իւ թիգ ծրագրին վասն ծխական երկանի միզասեան և երկասեան դպրոցաց Հայոց՝ հաստատեմք:  
Ի գերայ իսկականին ստորագրեաւ է

ՄԱԿԱՐ

ԿԱԹՈՒԴԻԿՈՍ Ա. Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Յ

## Կ Ա Ն Ո Ն Ք

ԵԿԵՂԵՑՅՈՒՆ ՖԻԾԱԿՆ ՈՒՍՈՒՄՆԵՐԵՆԸ ՀԱՅՈՅ

Ա. ՀԱՆՐԱԿԱՆ ԿԵՆԱՅՆՔ

1. Եկեղեցական-Ծխական Ուսումնարանք Հայոց կարգեալ են առ եկեղեցեօք և վանօրէիւք ի տալ մանկանց երկուց սեռից քաղաքաց և գիւղօրէից զսկզմական կրթութիւն և զուսումն կարերագոյն դիտելեաց:

2. Եկեղեցական Ծխական Ուսումնարանք բացեալ լինին հրամանաւ Ահափառ Հայրապետի Ազգիս և կառավարին ընդ ձեռն թեմակալ Առաջնորդաց առանձինն հրահանգաւ սահմանելով ի նորին Ահափառութիւնէ:

3. Եկեղեցական Ծխական Ուսումնարանք բաժանին յերկուս կարգս միդասեան և երկդասեան:

4. Ժամանակ ուսման աշակերտաց և աշակերտուհեաց սահմանի՝ վասն առաջնոյ կարգին՝ ոչ պակաս քան զերիս ամս իսկ վասն երկրորդին՝ ամժ հինգ:

5. Եկեղեցի, որ սղութեամբ արդեանցն անձեռնձաս լիցի պահել զառանձինն Ուսումնարան ըստ կարգադրութեան Առաջնորդի կարէ օժանդակել պահպանութեան այլում Ուսումնարանի:

6. Միմեանց մերձաւոր գիւղօրայք գումարելով ի մի զեկեղեցական և զժողովրդական դումարս իւրեանց, կարեն պահել զմի կենտրոնական Ուսումնարան, զորոյ զտեղին ընտրեսէ Առաջնորդն:

7. Եկեղեցական Ծխական Ուսումնարանք տղայոց և օրիորդաց պարտին լինել ամենայն ուրեօք որիշք ի միմեանց ըստ ամենայն պարագայից, թէպէտ և երկրորդին ևս գտանիցին ինմին գտնիթի եկեղեցւոյ:

8. Ամենայն Եկեղեցական Ծխական Ուսումնարան պարտի ունել զինքը ըստ որոշեալ ձեռյ (օրինակ թ. 1):

Բ. ՅԵՂԵՑ ԱՌԱՋՆՈՐԴԱՅ.

9. Առաջնորդք վիճակաց ի ինդրել ի Վեհափետէն զիրաւունս բանալոյ զԵկեղեցական-Ծխական Ուսումնարանս պարտին յայտնին նորին Սրբութեան թէ՝ յորում տեղուջ և ո՞րպիսի ուսումնարան կամցիին բանալ և որո՞վ արդեամբ պահպանեսի այն:

10. Եկեղեցական-Ծխական Ուսումնարանք պահպանին ըստ կարգադրութեան Առաջնորդաց՝ Եկեղեցական արդեամբ, թշակօք աշակերտաց և ա-

շակերտուհեաց և կամաւոր նուիբանօք ժողովրդեան:

11. Առաջնորդք տան հրաման առնուլ զմասն ինչ յեկեղեցական արդեանց՝ սահմանելով զայն ըստ չափու արդեանց եկեղեցւոյն և ժողովուրդն օրինաւոր խոստմամբ յանձն առնու լրացուցաննել զգումարն. որ պիտոյ իցէ ի պահպանութիւն Աւսումնարանին:

12. Առաջնորդք փոյթ կալցին զի Եկեղեցական Ծխական Աւսումնարանք պահպանեցին անխափան, իսկ թիթէ գիպեսցին պատճառք արդելառիթք պահպանութեան միոյ իրեք յԱւսումնարաց նոքա՝ յետ զամննայն հնարս ի գործ գնելոյ առ ի զառաջս առնուլ փակմանն փակեն զայնափիսին և անյապաղ յայտնեն Աեհափառ Կաթողիկոսին ցուցանելով զմանրամասն հանգամանս գործոցն:

13. Առաջնորդք առաջի առնեն զհոգարարձուս ի հաստատութիւն Աեհափառ Կաթողիկոսի:

14. Առաջնորդք զկարգմանէ և զարձակմանէ ուսուցչաց և վարժուհեաց յայտնեն անյապաղ Աեհափառ Կաթուղիկոսին:

15. Առաջնորդք զգաւառական ծխական Աւսումնարս կառավարեն ընդձեռն գործակալ քահանայից:

16. Թեհմակալ Առաջնորդք յաւարտ Աւսումնական տարբեց զամննայն տեհեկագիրս վերաբերեալս համօրէն Աւսումնարանաց վիճակին մատուցանեն Աեհափառ Հայրապետին:

#### Գ. ՅԱԴԱԳՍ ՀՈԳԱԲԱՐԵՒՇՑՈՒԵՑ.

17. Իւրաքանչիւր Աւսումնարան ունի Հոգարարձուս թիւ որոց ի քաղաքը որոշի ի Թեհմակալ Առաջնորդաց ըստ հանգամանաց տեղւոյն. իսկ ի գիւղօրայս թիւ Հոգարարձուաց պարտի լինել երեք, յորոց մինն է տեղական քահանայն ըստ որոշման Առաջնորդի միւսն է երեսփոխան Եկեղեցւոյն և երրորդն ընտրի ի հասարակութենէ գեղջն հոսանքայ ժամանակաւ:

18. Յաւարտ Աւսումնական տարբեց Հոգարարձուք մատուցանեն Առաջնորդաց ընդձեռն յաջորդաց կամ գործակալաց զտարեկան հաշիւս մոից և ծախուց. ևս և զընդարձակ գրաւոր տեղեկութիւն զընթացից և զյառաջադիմութենէ Աւսումնարանին զոր պատրաստելոց է Տեսուչն կամ աւագուսուցիչն յաւելլով առ այն զկարեւոր վիճակագրական տեղեկութիւնս ըստ սահմանեալ ձեռյ, նաև զհանգամանս պաշտօնավարութեան ուսուցչաց և վարժուհեաց (օրինակ Թ. 4. և 5.):

19. Թոնծիկ համօրէն պաշտօնէից սահմանի ի Հոգարարձուաց ըստ հանգամանաց տեղեացն և անձանց հայելով ի դրամական կարողութիւն Աւսումնարանին:

20. Հոգարարձութիւն Աւսումնարանին փոյթ ունի զի ըստ չափու կարողութեան յԱւսումնարանի գտանիցին գրադարան և զանազան ուսումնական պիտոյք.

21. Հոգարարձութիւնն ստանայ յԱռաջնորդէ զերկուս ժապաւինեալ մատեանս, յորոց ի միում ցուցակագրին ամենայն կահաք և կարասիք Աւսումնարանին, ևս և զրեան և այլ ուսումնական պիտոյք, իսկ յերկրորդում նշանակին մուտք և ծախք Աւսումնարանին (օրինակ Թ. 2 և 3):

#### Դ. ՅԱԴԱԳՍ ՈՒՍՈՒՑՑԱՑ

22. Տեսուչք, ուսուցիչք և վարժուհիք ընտրին ի Հոգարարձութենէ և հաստատին յԱռաջնորդաց:

23. Ի պաշտօն ուսուցչութեան հրաւիրին անձինք, որը յաջողութեամբ աւարտեալ իցեն զընթացս ուսման ի Թեհմական Պարոց հայոց և յարքունի:

միջնակառդ ուսումնարանու, իսկ վարժուհիք ընտրին յայնպիսեաց որբ վը-կայեալ իցեն բարի վարուք և մանկավարժական հմտութեամբ իւրեանց:

Առաջին միջեւ Եթէ առաջնորդք հարկ համարիցին կարգել յուսուցչութիւն զանձինս, որ՝ թէե ուռնին զպահանջեալն վկայագիր, բայց յայտնիք են բաղմամեայ փորձառութեամբ իւրեանց յասպարիգի մանկավարժութեան, պարտին յիւրաքանչիւրում նուագի առանձինն թոյլտուութիւն հայցել վասն ոյնպիսեացն ի Ահշափառ Կամուլիկոսէն:

24. Կառավարութիւն միոյ ուսումնարանի ըստ ուսումնական մասին յանձնեալ լինի ի Հոգարարձութենէ Տեսչի կամ աւագ ուսուցչի որբ և պատասխանատու են վասն կանոնաւոր և արդիւնաւետ դասաւանդութեան վասն բարեկարգութեան ուսումնարանաց և առհասարակ վասն ճիշտ կատարման ամսնայն պարտաւորութեանց վերաբերելոց տեսչութեան ուսումնարանաց:

25. Տեսուչն կամ աւագ ուսուցիչն պահէ զցուցակ աշակերտաց կամ աշակերտուհեաց (օրինակ Թ. 6) և հսկէ զի ուսուցիչք և վարժուհիք ճըշտի և անթիրի կատարեսցեն զպաշտօնս իւրեանց:

26. Տեսուչն կամ աւագ ուսուցիչն պարտի առաջի առնել Հոգարարձութեան զկիսամեայ համառօտ տեղեկագիր ի Յունվար ամսեան և զտարեկան մանրամասն տեղեկագիր ի Յունիս ամսեան:

27. Վ.մինայն ուսուցիչ և վարժուհի պարտի նշանակել ի մատենի զանուանս բացազոյ աշակերտաց և աշակերտուհեաց, ևս և զառարկայս ուսման իւրաքանչիւր աւուր (օրինակ Թ. 7):

28. Տեսչին կամ աւագ ուսուցիչն պարտի են ի կիւրակէս և ի տօնական աւուրս խմբութիւն տանել զաշակերտս և զաշակերտուհիս ի ժամ Ա. Պատարագի յեկեղեցի, նախապէս բացատրելով նոցա զիսրհուրդ տօնին:

Առաջին մարդ է վարժուհիք և վարժուհիք միշտ պարտին ընդ մանկուցն յեկեղեցի:

## Ե. ՅԱԴԱԳԱ ԱՇԱԿԵՐՏԱՑ ՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԵԱՑ

29. Թիւ աշակերտաց կամ աշակերտուհեաց յիւրաքանչիւրում բաժանման չպարտի լինել աւելի քան զվաճաւուն իսկ եթէ ըստ պիտոյից տեղութիւն հարկ լիցի միաւորել ի միում սենեկի զերկուս կամ նաև զերիս բաժանմանս յայն դեպս իսկ թիւ աշակերտաց կամ աշակերտուհեաց ոչ կարէ առաւելու քան զվերոյզրեալ թիւս:

30. Ի պահանջել հարկին մարդ է բաժանալ առ միում միում բաժանման մէն մի զուգընթաց բաժանմունս հանդերձ առանձինն ուսուցչք կամ վարժուհոք:

31. Յառաջին բաժանումն առաջնոյ դասարանի Ակեղեցական Ծխական Ուսումնարանաց ընկալեալ լինին մանկունք որոց հասակ չիցէ պակաս քան զութ ամ և ոչ աւելի քան զտասն և ըստ պյամ համեմատութեան ի յաջորդ բաժանմունս:

32. Ցանկացողք մտանել յուսումնարան մատուցանեն ընդ ինսդրագրոց զկայական ծննդեան:

33. Փամանակ ընդունելութեան աշակերտաց և աշակերտուհեաց է երկից ի տարւոջ, այսինքն ի սկիզբն տարեկան ուսմանց և ի Յունվարի:

Աշակերտ կամ աշակերտուհիք որբ մտանիցին ի Յունվար ամսեանն, պարտին պատրաստ լինել տալ քննութիւն յընթացից առաջին կիսամսէկի:

34. Աշակերտ և աշակերտուհիք ընդ ուսուցչաց և վարժուհեաց իւրեանց հաղորդին ս. խորհրդոյ երկից ի տարւոջ, յաւուրս Ա. Ծննդեան և Յարութեան Տեսուն:

35. Եւրաքանչիւր աշակերտ կամ աշակերտուհիք բացի վկայեալ չքառո-

բաց հատուցանել զնշանակեալ ի Հոգարարձութենէ զոմար ինչ յաղագս ուսման և դասական պիտոցից:

Զ. Յ. Վ. Պ. Ա. Յ. Ե.

36. Առարկայք ուսման Եկեղեցական Ծխական Աւսումնարանացն սահմանին առանձին ծրագրաւ:

37. Դասաւանդութիւն առարկայից լինի Հայ լեզուաւ, բացի Ռուսաց լեզուէ Ռուսաց պատմութենէ և յաշխարհագրութենէ Ռուսաստանի: որք աւանդին Ռուս լեզուաւ:

38. Յաւարտ ընթացից ուսման աշակերտաց և աշակերտուչեաց լինի հարցաբնութիւն առաջի Հոգարարձուաց և ծնողաց աշակերտելոցն:

39. Մանկունք, որք յառաջադէմ երեխացին ի հարցաբնութիւնս, ուղափոխացին ի յաջորդ բաժանմունս և աւարտողքն ընդունին զվկայական ուսման:

40. Եշակերտ և աշակերտուչիք որք ոչ յառաջադիմեսցեն, կարեն մնալ ամ մի ևս ինմին բաժանման:

41. Յաւարտ հարցաբնութեան կազմի արձանագրութիւն ստորագրութեամբ Հոգարարձուաց, ուսուցաց և վարժուչեաց, յորում նշանակին որդինք հարցաբնութեան և անուանք աշակերտաց և աշակերտուչեաց, որք արժանաւոր իցեն փոխագրութեան կամ վկայագրոյ: ևս և անուանք աշակերտաց և աշակերտուչեաց մնացելոց ի նոյն բաժանմունս կամ իսպատարձակելոց յաւառումնարանէն, և արձանագրութիւնն այն առարի ի հաստատութիւն Առաջնորդի ի ձեռն յաջորդաց կամ գործակալ քահանայից որ վաւերացուցեալ զայն՝ յետս գարձուցանէ ի գործագրութիւն և ի պահպանթիւն յուսումնարանին:

42. Տեսուչն կամ աւագ ուսուցիչն պատրաստէ վկայագիրս (օրինակ Թ. 8) ստորագրութեամբ Հոգարարձուաց և իւր ինքեան և անցուցեալ զայնս յառանձին մատեան Աւսումնարանին (օրինակ Թ. 9), տայ ծնողաց մանկերուոյն կամ ինամաւալաց նոցա, ընդունելով ի նոցանէ ստորագրութիւն ի մատենին:

43. Ժամանակ ամարոյին արձակուրդի որոշի ի քաղաքս ի 15 էն Յունիսից ց25 Օգոստոսի, իսկ ի գիւղօրայս սահմանի ըստ տեղական հանգամանաց, այն է՝ ի ժամանակի հնձոց այդ եկմից ևլն, ըստ որոշման Հոգարարձութեան, զոր միանգամ ընդ միշտ հաստատէ Առաջնորդն, իսկ ուր գոյ Յաջորդ, Յաջորդն:

44. Եշակերտ և աշակերտուչիք Եկեղեցական Ծխուկան Աւսումնարանաց արձակին յաւարտ կիրակեից և տօնից, նշանակելոց յառանձին ցուցակի:

## ԹԻՒ ԴԱՍՈՒՑ ՅԵՇՈՂՆԵԿԻ

ՅԵՇՈՂՆԵԿԻ ՀԱՄԱՐ 60.5 ԱԽՈԽՄԵՐ 0.50.5

### ԾՂԱԾՈՑ

ԴԱՍՈՒՑ ԱՆՎԻ	Ա.		Բ.		Կումար	
	Ա.	Բ.	Դ.	Ե.	Կասուց	
ԲԱԺԱՆՄՈՒԽԻՎԻ	...	բ.	դ.	բ.	կասուց	
Առաջինից						
Կրօն . . . . .	2	2	2	4	4	14
Հայոց լեզու . . .	6	6	6	5	5	28
Բուռաց լեզու . . .	6(*)	6	6	5	5	22/6(*)
Թուաբանհութիւն . . .	4	5	5	3	3	20
Պատմութիւն Հայոց և Աշխարհագրութիւն Հայաստանի . . . . .				3	3	6
Պատմութիւն Բուռաց և Աշխարհագրութիւն Առաստանի . . . . .				3	3	6
Ընդհանուր Աշխարհագրութիւն Բուռաստանի . . . . .				2	2	4
Բնական պատմութիւն . . .				2	2	4
Նրգեցողութիւն . . .	2	2	2	2	2	10
Վայելչագրութիւն . . .	2	3	3	1	1	10
Գծագրութիւն . . .	2	2	2	1	1	6
Կումար	18/6(*)	26	26	30	30	130/6*)

Եաւանական. (\*) 6 կէո ժամք յերկրորդում կիսամեկի:

ԵՐԻ ՀԱՎՈՒԹՅԱՆ ՖԻՆԱԿԻ

01:41:9 130505 000018740000

ՕՐԵԱՆՔԵՐԸ

ԴԱՍՏՐԱՆՔ	Ա.	Բ.	Գումար
ԸՆԴԱՆՄՈՒԽ	մ.	դ.	դասուց
Առաջին՝			
Կրօն . . . .	2	2	3 4 13
Հայոց լեզու . . .	6	6	5 5 28
Ուսաց լեզու . . .	6(*)	6	5 5 22/6(*)
Թուաբանութիւն . . .	4	4	3 2 17
Պատմութիւն Հայոց և Աշխարհագրութիւն Հայաստանի . . . .	.	.	3 3 6
Պատմութիւն Ուսուաց և Աշխարհագրութիւն Ուսուանի . . . .	.	.	3 3 6
Բնդշանուր Աշխարհագրութիւն . . . .	.	.	2 2 4
Բնական պատմութիւն . . . .	.	.	2 2 4
Երգեցողութիւն . . . .	2	2	.
Վայելչագրութիւն . . . .	1	2	1 1 7
Գծագրութիւն . . . .	1	2	.
Զեռագործ . . . .	2	2	3 3 12
Գումար	18/6(*)	26	26 30 30 130/6(*)

Յանօնս-Ռիշ ( asterisk ) կէս ժամբ յիրկորդում կիսամեկիվ :

Հրահանգ և ծրագիր ուսման կրօնագիտութեան վասն Եկեղեցական — Ծխական միզասեան և երկդասեան ուսումնաբանաց Հայոց:

Ապրեսրագոյն քան զտմենայն ուսմունս աւանդելիս յէկեղեցական Շիական Ուսումնաբանս պարտի լինել ուսումն կրօնի՝ ըստ գաւանութեան Հայաստանեայց Եկեղեցւոյ իրրե ուսումն այնպիսի որով անդամք Եկեղեցւոյ ի տղայ տիոց անտի գաստիարակին ի քրիստոնէական բարեպաշտութեան այսինքն է՝ յուսմունս զերագոյն հաւատակեաց և յուսմունս պարտուց մարդկան առ Աստուած, և առ ընկերս և առ անձինս իւրեանց:

Ուսումն կրօնի առ հասարակ բաժանի ի քանի ինչ մասունս յորոց կարեռքն են՝ Ազօմք, Պատմութիւն Ա. Գրոց Քրիստոնէական վարդապետութիւն, ծանօթութիւն զծիսից և զարարողութեանց Եկեղեցւոյ, Պատմութիւն քրիստոնէական Եկեղեցւոյ, Այսոքիկ ամեննեքեան աւանդին յայլ և այլ չափու և ուսմունս և յայլ և այլ Եղանակի յուրոցն ուսումնաբան՝ ըստ զատկարգութեանցն ըստ այսմ և ի ծխական Եկեղեցական ուսումնաբան այլ զի անհնարին է և անգատեհ առ տեղեւաս ճառել զայնցանէ ամեննեցուն՝ յիշեցուք համառօտակի զքանի ինչ պայմանս կարեռս վասն արդիւնառութեան կրօնական ուսմանցն:

Նահ՝ յուսուցման ազօթից փոյթ ուսուցիչն այնպէս տպաւորել ի սիրոս մանկանց զաղօթս բարեպաշտութեան զի նորա ոչ միայն Երկնեսցեն զրասս սերտ ի բերան ուսեալս, այլ գիտակցութեամք և բոլորով սրտիւ ուղղեցին զմիտս առ Աստուած և զաղօթսն կարդասցեն Երկիւղածութեամք իմն և պարկեցտութեամք և խոնարհութեամք: Առ ի տրամադրելոց յայս զմանկունս՝ ոչինչ են պիտոյ հարկադրանք և հրամանք, այլ զի ուսուցիչն յառաջ քան զամենայն ջերմեռանդն բանիւք և համոզական քաղցրութեամք զարմուցէ ի սիրոս մանկանց սէր անկեղծ առ Հայրն Երկնաւոր: Արարիչն և նախախնամողն, որում փառս տամք և գոհութիւն վասն անհան բարեացն և մարդասիրութեան և առ որ գիմեմք ինդլ ուածովք յամենայն գործս մեր: Առ այս յոյժ օգտակար է յորժամ ուսուցիչն ինքնին ի սկզբան անդ զասառութեան ազօթս արասցէ սրտառուչ բանիւք և անկեղծութեամք առաջի մանկանց և լուռ մասնակցութեամք նոցա՝ զոր օրինակ՝ վասն հիւանդընկերի ուրուք առողջութեան վասն միմիթառութեան ի Հոգւոյն սրբոց վրշտացելոյ ուրումն բարեկամի: վասն անփորձութեամք անցուցանելոյ զգիշերն և վիրստին արժանանալոյ ի տեսութիւն իրերաց, վասն առողջութեան և յաջողութեան կենաց ծնողացն բարերարաց ինսամակալաց և լն: և լն: Ա. Յ. սօրինակ նախակրթանք յաղօթս՝ պատրաստեցին զմանկունս յայն՝ զի յառաջնոց իսկ աւուրց ուսմանն հայեցին նորա յաղօթս, որպէս ի յաւելուած և ի բղխուած սրտից իւրեանց և յապագայս յառնելն զեկեղեցական ազօթս՝ կրկնեսցեն զիմաստս նոցին իրրե յանձանց ինչ ինչ ասացեալս, և արասցեն ի նոսա ըստ զիսաց և ըստ պատշաճից յաւելուածս և անձնական խընդրուածս:

Եթե այսր նոխապատրաստութեան կրօնուսուցյն ուսուցէ զհակիրճ մաղթանս և զաղօթս, ապս զընդարձակիսն քաղելով զայն ի Ժամագրոց Եկեղեցւոյ Հայոց: Ամենայն մաղթանք և ազօթք բացարիսցին նախ յաշխարհիկ լեզու և յորժամ կատարելապէս ըմրունեալ իցէ մոնկանց զիմաստս նոցին՝ պահանջեսցի և բերանացի սերտումն ի գրոց լեզու:

Յուսուցման Սրբագան Պատմութեան հնոյ և նորոյ կտակարանաց մեծապէս օգտակար է, եթէ ուսուցիչն յետ պատմելոց զդասն ընթերցցի և բացարիսցէ աշակերտաց հաստուածս ի Ա. Գրոց, վերաբերեալս նիւթոյ դասին: Կարեռ է նմանապէս խելամձւու առնել զմանկունս բարցյական և կրթական իմաստից պատմութեանն տալով նոցա զգալ զաղեցութիւն աստուածային ուսմանց ի հոգիս իւրեանց զի մի լինիցի դաս կրօնագիտութեան լ. կ մեքե-

Նայուկան իրկնութիւն սերտեալ բառից Զնոյն՝ և ի գասս քրիստոնէական վարդապետութեան և ի բացատրութիւնս եկեղեցական տօնից:

Ի զարդացումն կրօնական կենաց մանկանց՝ հարկ անհրաժեշտ է, զի նոքա, մանաւանդ ի կիւրակէս և ի հանդիսաւոր աւուրս յաճախեսցեն յեկեղեցի՝ մասնակցելով ըստ կարողութեանցն յերգեցողութեան և սպասաւորելով: Մեծ լիցի յօյժ օգուտն եթէ ուսուցիչն կրօնի ինքնին ածիցէ զաշակերտս իւր յեկեղեցի՝ առաջնորդ կալով նոցա և աստ իրրե օրինակ կենդանի: Հետո տարադէպ յիշել աստէն անցողաբար զի ի տիս մանկութեան, յորժամ առաւել զգայուն են սիրաբն՝ հակամէտ են մանկունք ընդունել օրինակ անձանց զամենայն զոր տեսանեն ի վարս մանաւանդ առաջնորդաց իւրեանց և դաստիարակաց: Ամին իրի պարտ է ուսուցչին կրօնագիտութեան կշռել զանձըն իւր և պատրաստել օրինակ կենդանի վասն մանկանց յամենայն ինչ, յորս կամի առաջնորդել, ունելով օրինակ զմեծագոյն Վարդապետն աստուածային ուսմանց, որ նախ առնէր միշտ և ապա ուսուցանէր: Աչ կարէ ուսուցիչ որ պատուաստել ի սիրուս և ի հոգիս աշակերտելոցն զորս ոչ կրէ ի սրտի իրում և ի հոգւով, և ոչ ուղղել ի վարս առաքինականս: Եթէ ինքնին չունիցի զայնպիսի ուղղութիւն ի վարս իւրում: Այս առաջնին պահանջք են յուսուցչեն, զօրովք եթէ զանց առնիցէ՝ ոչ կարէ տպաւորել ի սիրուս մանկանց զուսմունս քրիստոնէական հաւատոյ: Իրրե զպէտս հոգեոր կենաց և պատրաստել զայնս աղբիւր առաքինական վարուց և անկիշծ բարեպաշտութեան:

## Ա. Գ. Ա. Յ. Ե. Խ.

## Ա. ՏԱՐԻՒ.

Նախապատաստութիւն աղօթից: Տէրունական աղօթք, «Առաջնորդեամեզ Տէր Աստուած մեր» . . . Ենկեալ առաջի քո» . . . Տէր մի՛ գարձուցաներ զերես քո յինէն» . . . «Պահպանեալ զմեզ քրիստոս Աստուած» . . . «Զառաւոտու աղօթս և զրանաւոր պաշտօնս» . . . Տէր Աստուած մեր, Դու պահեալ զմեզ ի գիշերիս յայսմիկ» :

Մանր պատութիւնք բարոյակիրթականք, քաղեալք ի Ա. Գրոց և յայլուստ՝ բատ չափու հասկացողութեան մանկանց և բատ հանգամանաց առօրեայ կենացն, բերանացի աւանդմամբ յաշխարհիկ լեզու:

## Բ. ՏԱՐԻՒ.

«Գոհանամք զՔէն Տէր Աստուած մեր, որ զարթուցիր» . . . Լուր ձայնից մերոց, Տէր Աստուած մեր» . . . «Աչք ամենեցուն ի Քեզ Տէր յուսան» . . . Փառք Քեզ Տէր, փառք Քեզ թագաւոր փառաց» . . . «Սուրբ ես Տէր Աստուած մեր հզօր և փառաւորեալ» . . . «Յիշեալ Տէր զպաշտօնեայս քո, զՃողան մեր» . . . Խաչ քո եղիցի մեզ ապաւէն» :

Համառօտ պատմութիւններոյ Կտակարանի, որք բացատրեն զիսդիչուրդս տօնից Ծննդեան, Ֆրունէից, Ընծայման ի տաճարն, Յարութեան, Համբարձման, Հոգեգալստեան, Աւետման Աստուածածնայ. ծանօթութիւն զտօնից Խաչվերացի և Գիւտոյ խաչին:

## Գ. ՏԱՐԻՒ.

«Քեզ երկիրպագանելով, Տէր Աստուած մեր» . . . «Հայր գթած բարձր նետմաղ» . . . «Հրեշտակի ինազարութեան յանձն արա զանձինս մեր» . . . «Ենկամ Տէր զաղաչանս մեր» . . . «Փառք ի բարձաւնս Աստուծոյ» . . . «Հանդանակն հաւատոյ»:

Վարունակութիւն բացատրութեան եկեղեցական նշանաւոր տօնից որպի-

պիսիք են՝ Վարդավառին, Լուսաւորչին, Թագէոսի և Քարդուղիմէոսի առաքելոցն, սրբոց թարգմանչացն, Մեծին Ներսիսի սրբոց Վարդանանցն և Ատովմեանց, Հոփիսիմեանցն, Էջմիածնի, Երևանն խաչին, Վարագայ Խաչին, և այլոցն.

Խորհուրդք մասանց շինուածոյ եկեղեցւոյ և բացատրութիւն զլիաւոր քարոզաց և աղօմից Ս. Պատարագի:

#### Բ. ԳԱՎԱՐԱԿԻ

#### Դ. ՏԵՐԵ

Արբաղան պատմութիւն հնոյ Կտակարանի:

Քրիստոնէական Վարդապետութիւնն—Մեկնութիւն Տէրունական աղօթիցն, մեկնութիւն Հանգանակին հաւատոյ և բացատրութիւն եօմնն Խորհրդոց եկեղեցւոյ՝ ըստ դաւանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ:

#### Ե. ՏԵՐԵ

Արբաղան պատմութիւն նորոյ կտակարանի: Շարունակութիւն Քրիստոնէական Վարդապետութեան—Մեկնութիւն Տանաբանեայ պատգամաց, յորս բացատրին յարաբերութիւնք մարդոյ ընդ Աստուծոյ և ընդ ընկերին, Արդ Աստուածպաշտութեան ըստ կանոնաց եկեղեցւոյ Հայոց:

Հրահանգ և Ծրագիր ուսման Հայ լիզուի վասն Ակեղեցական—Ծխական միդասեան և երկդատեան ուսումնաբունաց Հայոց:

Ակիզբն ուսման մայրենի լեզուի յառաջնում ամի լինի ըերանացի վարժութեամբ՝ որոց նապատակ է նախապատրաստել զնորեկ մանկունս ի համակարգեալ ուսումն գրագիտութեան: Վարդութիւնք այդոքիկ լինին դիւրընդել զրուցատրութեամբք ուսուցչին ընդ մանկունս նիւթք զրուցատրութեանցն կարեն լինել այլ և այլ առարկայք զննելիք, առակք, մանրավէպք, առածք և նմանք սոցին որք ամենայնիւ գիւրահաչաք լիցին մանկանց՝ ըստ լեզուին և ըստ բովանդակութեան: Փոյթ լիցի ուսուցչին զի ի վարժութիւնս աշակերտ ոք յորժամ խօսիցի կամ պատմիցէ և կամ նկարոցիցէ զառարկայ ինչ՝ արտասանութիւն նորա լիցի պարզ և լիահնչիւն ձեւ արտայայտութեանն՝ կանոնաւոր իմաստքն միկնք և զիտակականք և նկարագրութիւն զննելիք առարկային կատարեալ՝ ըստ չափու կարողութեանն: Քերանացի նախակրթանքն այսորիկ յոյժ կարեռոք վասն արդիւնաւէտ ընթացից ուսուցման լեզուի կարեն տեսել ի սկզբան անդ տարսոյն եօմնեակս երկուս կամ երիս:

Եետ այսորիկ ուսուցիչն մատիցէ յուսուցումն գրադիտութեան հաւական եղանակաւ, ծանօթս տալով մանկանց նախ զէութենէ մարդկային խօսից հատուածով իրիք ի նիւթոց անտի անցեալ զրուցատրութեանց ապա վէր-ձեռշէ զհատուածն զայն ի նախադասութիւնս, և զնախադասութիւնն վեր-լուծեոցէ ի բառս զորս ապա ի վանկս և զայսոսիկ ի տառս: Յորժամ աշակերտք այսու բնական և զիւրիմանալի եղանակաւ զիտասցեն զնանակութիւն տառիցն ի խօսս և զկերառութիւն նոցին, ապա պարտ է անդ ագարձաբար բարձրացնելու զուգապատշաճ տառից կաղմել զվանկա, լուսու և զնախադասութիւնս: ձեակերպելով միանգամայն ի գիր զամնեցն, զոր

ուսցին մանկունք։ Յոյժ օգտակար լիցի եթէ աշակերտք, յորչափ ինչ ինչ հնար իցէ ինքնին կատարեսցեն զվերտողեալ կրթութիւնսն իսկ ուսուցիչն առաջնորդեսցէ միայն նոցա, և ի տկարանալ և եթ նոցին՝ ցուցեցիւրին և զկարգաւոր եղանակն։

Զկնի նախապատրաստութեանցս պարտ է տալ ապա ի ձեռս աշակերտաց զյարմարաւոր գասագիրս ընթերցանութեան։

Ե ժամ ընթերցանութեան հարկ անհրաժեշտ է ուսուցչին ուշագիր լինել, զի աշակերտք ընթերցցին մտառութեամբ, ճզրիտ և պարզ առօգանութեամբ և անսայթաք վերծանութեամբ։ Առ այս կարեսոր է, զի ուսուցիչն ինքնին յառաջագոյն միանգամ և երկիցս ընթերցցի զդան ի լուր աշակերտաց, ապա տացէ նոցա կրկնիլ զնոյն ի ներկայութեան իրում, ուզգելով զմերութիւնսն և հուսկ յետոյ տացէ զայն դաս ի սերտումն ըստ աւանդեալ կարգին։ Ընդ սմբն փոյթ կալցի ուսուցիչն՝ տալ յլնթերցումն աշակերտաց միշտ զրուած գիրահան և համապատասխանս չտիռուզարգացման նոցա՝ ըստ լեզուին և ըստ իմաստիցն։ Սցնակէս միտ զիցէ, զի վերծանութիւն աշակերտաց լիցի բնական ձայնիւ և պատշաճաւոր տրութեամբ բանից, որպէս խօսին մարդիկ ի հասարակի ընդ մրմեանս, քանզի ոչ այլ ինչ է գիրն, եթէ ոչ պատկեր մարդկային խօսից։ Մեծապէս վնասակար է, յորժամ թղյլատրենն մանկանց ընթեռնուլ եղանակաւոր իմն կերպիւ, իրբե թէ յեկեղեցւոց և անտեղի ձայնարկութեամբ։

Եւ զուղագրութենէ լեզուին պարտի հոգ տանել ուսուցիչն։ Ոչ եթէ յետաձգել պիտոյ իցէ զկրթութիւն ի կանոնս ուզգագրութեան ցուսումն քերականութեան, յորժամ մանրամասնօրէն և համակարգութեամբ աւանդելի են կանոնքն այնորիկ։ Այլ անդստին ի սկզբանէ զրավարժութեանն՝ հարկ է կրթել զմանկունս նաև յուզգագրութեան։ Առ այս բազումն նըսպասէ հնչական եղանակ գասաւանդութեանն։ Քանզի անդէն խսկ ի վերլուծելն և ի բազադրելն զրառս, յորժամ զուտ հնչումն և եթ տառին լսի առանց աւելորդ ձայնից, լսելիք ուսանելեաց ընտելանան ճշգրիտ արտասանութեան, ապա ուրեմն և ձեւակերպութեան մէն մի գրոյ։ Հուսկ ուրիմն ի վարժութիւն ուզգագրական կանոնաց պիտեսցի և յաճախակի արտագրութիւն ընտրեալ և նշանակեալ հատուածոց՝ ճշտիւ և մտագրութեամբ։ և ապա գրութիւն ի լրոյ պարզ թելագրութեամբ ուսուցչին, և միւս ևս կազմելն խմբից ուզգագրելի բառից։ Այս ամենայն գործնական վարժութիւնք գիւրաւ տպաւորեն ի յիշողութեան մանկանց զգիւաւորս յուզգագրական կանոնաց, չե ևս միւսալ ի տեսութիւնս քերականականս, զօրս առ յագայն ունին նորա ուսանել։ Զամենայն վրիպակս աշակերտին անհրաժեշտ է ուզգել ինամուզ զի մի տպաւորեսցին այնորիկ ի միւս նորա և շփոթեսցին զեա։ Յոյժ օգտակար իցէ, յորժամ ուսուցիչն կանխագէս ընտրիցէ և կազմիցէ հատուածս յարմարինս վասն նախորշեալ ուզգագրական գիտելեաց և հոգ տարեալ կանխաւ, զի մի պարունակեսցէ յինքեան հատուածն այն բազմաթիւ գիրս վրիպակիս, քանզի բազում և յաճախական սիսալմունք զհետ կարեն բերել ոգւց աշակերտին զլքումն և զյուսահատութիւն։

Եւս համաստագոյն ցուցմանց զուսուցմանէ մոյրենի լեզուիս՝ մնացալն ամենայն թողեալ լինի հմտութեան և աշխատասիրութեան բանից ուսուցչին։ Կարգեցուք պարզ պարզ զնիւթե և զսահմանս ուսման լեզուիս ըստ ամս և ըստ դասարանս։

Յետ համաստագոյն ցուցմանց զուսուցմանէ մոյրենի լեզուիս՝ մնացալն ամենայն թողեալ լինի հմտութեան և աշխատասիրութեան բանից ուսուցչին։ Կարգեցուք պարզ պարզ զնիւթե և զսահմանս ուսման լեզուիս ըստ ամս և ըստ դասարանս։

### III. - *Supernovae and pulsars*.

C. STUCK

Նախապատրաստութիւն բերանացի վարժութեամբ: Գրութիւն և ընթերցումն բառից: Նախադասութեանց և կարձառօտ յօդուածոց: Ճիշտարտասանութիւն և կիրառութիւն երկրառքառ տառից: Ճանաչումն ձայնաւոր և բաղաձայն տառից: Պարզ առողանութիւն և կանոնաւոր տրոհումն բառից և նախադասութեան՝ յընթեռնուուն: Ճանաչումն նշանագ առագանութեան և տրոհման: Կիրառութիւն գլխազրոց և յատուկ անուանն և ի սկիզբը պարբերութեանց: Կիրառութիւն նշանաց առողանութեան: Փոքրիկ և դիւրին ոտանաւորք բերանացի: Արտազրութիւն բառից և նախադասութեանց:

P. SUEB.

Կանոնաւոր ընթերցումն յաշխարհիկ լեզու նշանակեալ յօդուածոց՝ բացատրութեամբ հանգերձ։ Համառօտոթիւն պարունակութեան յօդուածոց՝ բանաւոր և մերթ զրաւոր։ Պատասխանազրութիւն առ հակիրճ և պարզ հարցմունս ուսուցչին, տուեալս առ ի վարժել զաշակերտս ի զրաւոր արտայայտութիւն մտաց՝ կանոնաւոր շարադասութեամբ բառից։ Մաքուր և ճիշտ ընդօրինակումն ընտրեալ հատուածոց։ Որոշումն բառից թէ որք յայնցանէ ևն անուանք առարկայից, որք են անուանք որպիսութեանց առարկայից և որք ցուցանեն գործողութիւնս նոցունց այսինքն է՝ ճանաչել զանուն գոյական տծական և զրայ՝ առանց քերականական անուանակոչութեանց։ Որոշումն թույց անուանց կիրառութիւն - և չ գրոց Աւղագորութիւն բառից յանգելոց յ-ծ, մ-ծ, մ- և է- մասնկունս։ Կիրառութիւն չ գրոյն ի վերջ բառից և ի մէջն։ Որոշումն հրամայական, կոչական և բացագանչական բառից։ Կազմութիւն պարզ և բարդ բառից։ Ցարմանարաւոր ոտանաւորք, բերանացի։

9. SURF.

Ծարունակութիւն կրթութեանց յանսայթաք և ի կանոնաւոր ընթերցմունք և ի գրութեան նշանակեալ նիւթոց յաշխարհաբառ լեզու։ Գրութիւն թելազգրութեամբ ուսուցչի՝ ըստ կարելցն անսխալ։ Աւզդագրութիւն բառից յանդելոց ի մասնիկս—որ, որո՞ւ, ո՞ն, յի՞ն, ի՞ն, ո՞ւի, ո՞յի ընու, է՞ս, ո՞չ, ո՞ւր, և այլն։ Կազմութիւն պարզ, բարդ, ածանցեալ և բաղադրեալ բառից։ Որոշումն յատուկ, հաւաքական և հասարակ անուանց։ Որոշումն մասնանց բանի, տալով նոյն զքերականական անուան։ Որոշումն նախադասութեանց և գլխաւոր մասանց նոցին։ Վիրառութիւն նշանաց տրոհման։ Վրթութիւնք ի հղողվմունք և ի խոնարհմունք առանց քերականական խիստ համակարգութեան։ Քերանացի ոտանաւորք։

### 3.2. *Quantum mechanics*

T. SUGI

Ընթերցումն այլ և այլ քաղուածոց ի մատենագրաց և առաւելապէս յեղշեայ և ի Փարպեցոյ՝ յաշխարհիկ լեզու։ Գրաբառ հատուածը ի Ա. Գրոց և յազգային մատենագրաց և գլխաւորապէս ի յիշատակիելոց անտի՝ յերկուց հեղինակացն, համակարգեալ քերականութիւն աշխարհաբառ լեզուի։ Անսիսալ և կանոնաւոր արտայայտութիւն մնաց՝ գրով և ի բերանոյ՝ աշխարհաբառ լեզու առ և թարգմանութիւն դիրին հատուածոց ի զրաբառէ։ աշ-

Խարհաբառ բաղդատելով ի պատշաճաւոր գէպս զտարբերութիւնս երկացունց ի վերջաւորութիւնս հոլովից թուոց ժամանակաց բայից ևս և ի դասաւորութեան բառից. Գրաւոր աշխատութիւնք ըստ առաջնումն այլ միայն առաւելացոյն ընդարձակութեամբ և բաղդարութեամբ նիւթոցն և բովանդակութեանց. Վարժութիւնք ի նամակազրութիւնս և յայլ տեսակս հանապազրեայ զրայրութեանց. Զափածոյ բանաստեղծութիւնք յաշխարհիկ լեզու և ի գրոցն.

b. SUPP.

Ընթերցանութիւն և գրաւոր աշխատութիւն ըստ Նախընթացին, յաւելլով յաւետ զլբացացիչ կրթութիւնո՝ առ ի քաջալարժու առնելոյ զմանկուն ի կառարեալ ընթերցանաթեան և ի գրութեան։ Թարգմանութիւն դիւրին բանից յաշխարհարան է ի գրաբան։ Ստուգաբանական մասն քերականական գրոց լեզուի և լրացումն թերութեանց քերականութեան աշխարհարանին՝ բազդատութեամբ օրինաց փոփոխման երկպունդն՝ ըստ չափու հասկացողութեան աշակերտելոց։ Աերլուծութիւն նախագառառութեանց ի դրոց լեզու։ Ըստիր բանաստեղծութիւնք ի բերան։

116 [www.gutenberg.org](#)

U. S. GPO.

Աւումն Թուս լեզուի սկսանի յերկրորդ կիսամեկէ առաջնոյ տարւոյն, նուիրելով այնմ կէս ժամ յաւուրն՝ Կէտ Նպաաաակի գասատուութեան պարտի լինել ծանօթս առնել զմանկունս խօսուն բարբառոյ Առուսաց քաղելով զնիւթ ուսման ի հատուածոց տարրական ընթերցարանի Թուսաց քաջմիտ եղեալ զի հատուածքն այնոքիկ բովանդակութեամբ իրեանց ըստ կարի պատշաճ իցեն նիւթոյն՝ զոր կանխաւ ուսեալ է մանկանց ի մայրենի բարբառ իւրեանց:

P. SURF.

Զկնի բաւականապէս ընտելացուցանելը զլսելիս մանկանց յըմբանումն անսովոր ձայնից և կապակցութեանց նոցին. մարթ է սկիզբն առնել յաջութեամբ ուսուցանելը աշակերտաց զգբագիտութիւն՝ այն է զլնմթերցանութիւն և զգբաւթիւն Առու լիզուի. Խնկատ առեալ զի նախ՝ հանապազօքայ կիսաժամ զբաղմունք յընմացս երկրորդ կիսամեկի առաջնոյ տարւոյն չկարեն հաստատուն ինչ արդիւնս աալ ի կրթութեան խօսուն բարբառոյ Առուաց և երկրորդ զի ուսումն երկուց տարբեք լեզուաց ի միումժամանակի անյարմար իմն է յայնպիսում շրջանի յորում պահանջի ի մանկանց լարել զամենայն մտաւոր զօրութիւնս իրեանց որպիսի ինչ համարելի է շրջանն յորում զկնի մեքենական ընթերցանութեան մայրենի բարբառոյ ուսելը յընմացս առաջնոյ ամի, անցանեն յանսոյթաք և յիմաստալից վերծանութիւն, վասն պյուրիկ օգտակարագոյն լիցի յառաջնում կիսամեկի չսկսել տակաւին զուսումն Առու գրագիտութեան այլ շարունակել զվիրուցիւք բերանացի կրթութիւնս և միայն յերկրորդ կիսամեկէ երկրորդ տարւոյ սկիզբն առնել հիմնաւորապէս ուսուցանելը զգբագիտառութիւն Առու լեզուի, նշանակերտ վասն զբագմանցս ժամ մի յաւարն ողջոյն տարւոյ.

Յերկրորդ կիսամեկէ սկսանի և տեսէ ցվախճան տարբեպյ ուսումն զրագիտութեան՝ այն է ընթերցանութիւն և զրութիւն. զնի՛ զբաղմանց

Հիմնելով ի վերայ հատուածոց՝ սրոց աշակերտեալքն հմտացեալ են բանաւոր կրթութեամիք ըլնմացս երկուց նախորդ կիսամաց։ Միանգամայն պարտ է խորչիլ ի սովորական ընթերցմանէ հեղենայիք, վասն զի մանկունք քաջ ուրեմն ընտելացեալ են ողջ ածել զսիւղղորսց ի մայրենի լեզուի իւրեանց. գարձեալ հարկ ի վերայ է ուսուցչին ի գասատութեան Թուս զրութեան օգտիլ ի ծանօթութենէ տարերաց զրոց մայրենի բարբառոցն։

Որ ինչ հայի յեղանակ գասատութեան Թուս լեզուի, ուսուցիչն չը պարտի ընթերցմանութեամբ և եթ հատուածոցն շատանալ, այլ փափաքելի է զի աղջի աղջի հրահանդօք կրթեսց զմանկունոն և տացէ սեպհականնել զամենայն նիւթն, այն է ի բերան ուսանել կանոնաւոր արտաքերութեամբ և իմաստալից ընթերցմամբ, հասու լինել բովանդակ իմաստից ընթերցաւածոցն, պատմել զնոյն որչափ հնար իցէ Թուսուերէն, և ընդարձակագոյն և Հայենէն՝ յորժամ հարկն պահանջիցէ, զրել անսիսալ զաւսեալն՝ ծանօթանալով կանոնաց ուզիլ զրութեան և գործածութեան կէտից՝ ըստ չափունիթոցն ուսելոց։

#### Գ. ՏԵՐԻ.

Ենթագրելով զի ի վերջ կոյս երկրորդ ամի մանկունք բաւականապէս ուսեալ են զգրագիտութիւն՝ թէե ի վերայ չափաւոր հատուածոց՝ թէ ըստ բովանդակութեանն և թէ ըստ ընդարձակութեան նիւթոյն ի սկիզբն երրորդ տարւոց պարտ է զրաղել յուսումն ընդարձակագոյն հատուածոց սրակ և չափածոյ բանից, նովին կարդաւ որպէս ցուցաւ ի վերայ ։ Ի վերջ կոյս տարւոյն ի հատուածոց ընթերցելոց պարտ է հանել կանոնս քերականականս և մանաւանդ ուղղագրականս։ Յայս վայր աշակերտեալք պարտին գիտել զլեզու Թուսաց այնչափ՝ որչափ ինչ մատակարարեալ են նոցա հատուածքն ընթերցեալք ըլնմացս տարւոյն, այլ և հեշտութեամբ ընթերցեալ նոցա։

#### Բ. ԴԱՍՏԱՆ:

#### (ԶՈՐՐԱԲՐԴ ԵԽ ՀԵԿԳԵՐԱԲՐԴ ՏԵՐԻ)

Որպէս յաղագս բերանացի պատմութեան, այսպէս և յաղագս զրութեան և ընթերցմանութեան պարտ է ի կէր արկանել զնոյն եղանակ գասատութեան որ ի նախընթաց ամսն, ընթերցման զի բեկարձակագոյն հատուածս բանից բանահիւսականս Քացատրութիւն զինաւոր կանոնաց ստուգարանութեան և համաձայնութեան, մանաւանդ այնոցիկ, որ վերաբերիցն ուղղագրութեան։ Թարգմանութիւն զիւրին հատուածոց ի հայկականէ ի Թուս լեզու։ Ընթերցումն մանկական զրոց արտաքրու զաստկան պարագմանց ընդառնորդութեամբ ուսուցչի։

Մրագիր ուսման ազգային պատմութեան և աշխարհագրութեան Հայտառանի վասն Եկեղեցական-Ծխական երկդասեան Ուսումնարանաց Հայոց:

### Ա. Պատմութիւն Ազգային

Բ. Քառուշն.

Դ. ՏԵՐԵ.

Հայկ.—Արամ. —Արայ Կեղերիկ. —Տիգրան Երուանդեան. —Տեղեկութիւնք զվաճառականութենէ Հայոց. —Արօն Նախնի Հայոց (արևապաշտութիւն, զիցապաշտութիւն—Արամազդ, Անահիտ, Աւաչազն). —Վաղարշակ Ա. —Տիգրան Բ. —Արգար. —Արտաշէս Բ. —Տրդատ և Ս. Գրիգոր Լուսուորիչ. —Արշակ Բ. —Մեծն Կերոս. —Սահակ Պարթև և Մեսրոպ Մաշտոյ. —Վարդան Մամիկոնեան. —Աւաչան Մամիկոնեան. —Գայլ Աւաչան:

Ե. ՏԵՐԵ.

Արշաւանք Արաբացւու (Տիգրան Մամիկոնեան). —Աշոտ Բագրատունի. —Աշոտ Բ. Երկամի. —Աշոտ Գ. Աղորման. —Անի մայրաքաղաք. —Գաղիկ Բ. —Արշաւանք Սելջուկեանց (Ալի Ասլան). —Թորոս Բ. —Ներսէս Շնորհալի. —Լեռն Բ. Թագաւոր Կիլիկիոյ. —Վաճառականութիւն Հայոց ընդ Եւրոպացիս. —Հեթում Ա. —Արշաւանք Թալթարաց ի Հայոց. —Լեռն Գ. —Լեռն Զ. —Լանդթամուր. —Շահ Արտավ. —Նիկոլ Թորոսոսիշ. —Փիլիփառ Աղբակեցի. —Արգար Եւգոնիացի. —Հայք ի Հեղիկոս. —Դաւիթ բէդ. —Միհմար Սերաստացի. —Յովսէփ Արդութեան —Յովակիմ Լազարեան. —Յարութիւն Պեղմեան. —Խաչատուր Արովեան:

### Բ. Աշխարհագրութիւն Հայտառանի:

Բ. Քառուշն.

Դ. ԵՒ. Ե. ՏԵՐԵ.

Դասատութիւն աշխարհագրութեան պարտի ընթանալ կից ընդ զասատութեան ազգային պատմութեան. Զինի տալց մանկանց զընդհանուր տեղեկութիւնս զտարածութենէ աշխարհին Հայոց, զզլիսաւոր լերանց, զլձաց և զգետոց ևս և զարդի բաժանմանէ երկրին, ուսուցիչն պարտի ի պատմման զքաղաքական անցուցանել ի քարտիզի զտեղիս ուր անցքն զիցացան. Միանգամացն ի կարևոր զէպս վշշթ ունիցի հաղորդել աշակերտոց տեղեկութիւնս պիտանիս զարդի վիճակէ բնակչաց այլ և այլ գաւառաց և քաղաքաց:

Մրագիր ուսման Պատմութեան և աշխարհագրութեան Ուսուցյերկդասեան Եկեղեցական ուսումնարանաց Հայոց:

### Ա. Պատմութիւն Ուսուցյ

(ՀԵՂԻՇՏԵՐ ՔԱՌԵՐԱՆ)

Նախնի Սլավոնք, կենցաղավարութիւն և հաւատալիք նոցա: Հրուեր Վարեկաց, Դարձ Օլդայի ի քրիստոնէութիւն, Միքանութիւն Վաղիմիրի և Թուռ աւգի: Բաժանութեան և ակարանալ Ուսուցյ զէնի մահուան Խորուրի: Արշաւանք թաթարաց: Աղէքսանդր Նեւացի: Ճակատամարտ որ ի Առ-

լիկով: Միացումն Առևս երկրի ընդ ձեռամբ Յովհաննու Գ. - ի, Նուաճումն Դ. աղանի, Աստրախանի և Սիբիրից: Մարկովթիւն զիւղացւոց: Խնքնակոչք: Հաստատութիւն ի գահն Առևսաց Առմանեան տօհմի: Գլխաւոր գէպք ի նոր պատմութենէ Առևսաց ցներկայ աւուրս:

### Բ. Աշխարհագրութիւն Առևսաստանի

(Հերթեր բառերունք):

Ծանօթութիւն երկրին Առևսաց ի վերաց քարտիզի, սահմանք, ծռվք, լիճք, գետք: Ընդհանուր ձև մակերեսութիւն երկրին: Երինք: Քաժանումն Առևսաստանի յեւրոպական և յԱսիական մասուն: ևս և ի նահանգս և ի գաւառս (առանց անուանելոյ զայնս): Կոմիաս: Մայրոքազարք Առևսիոյ և նշանաւոր քաղաքք Նորին: Նրկաթուղիք Առևսաց: Տարածութիւն Առևսիոյ: Թիւ բնակչաց և ցեղք նոցին:

Օրինակ թ. 8

Վեհականութիւն

Աշակերտ Եկեղեցական - Ծխական միզասեան Աւսումնաբանի տղայոց (այս անուն +աղաւի կամ գեղջ) (ասու Նշանակելի են անուն, հայրանուն և մականուն, վիճակ կամ կողած, պեղի ծընկդեան, պար ամիս և օր ծննդեանն): Եմուտ յԱւսումնաբան յամի 18 յ բաժանումն և ի վերջին հարցաքննութեան ամենոյն առարկայից՝ յամնեանն 18 ամի, եցոյց՝

վարուք յառաջադիմութիւն այսպիսի:

1. Ի կրօնագիտութեան
2. Ի Հայոց լեզուի
3. Ի Առևսաց լեզուի
4. Ի թուաբանութեան
5. Ի վայելչագրութեան
6. Ի գծագրութեան
7. Ցերպեցողութեան

Որոյ վասն և տուառ հմատ

վեայտգիրս այս կնքով Աւսումնաբանիո յամի 18 յամնեանն

ի (այս անուն +աղաւի կամ գեղջ):

Սահմանադրութեան Հագաճաշնուաց և  
Տեսչի կամ առաջ սահմանադրութեան

Վ. Ա. Յ. Ե. Դ.

Աշակերտ Եկեղեցական Ծխական երկպատեան Ուսում նարանի  
աղայոց (այս անուն +աղայի համ գէղջ) (ասու նշանակէլի են անուն,  
հոյը անուն և մականուն, վէճակ կամ հովանուն, աւոյի ծննդեան, պարէ,  
ամս և օք ծննդէան), եմուտ յԱւսումնարան յամի 18 յ  
բաժանումն գասարանի և ի վերջին հարցաքննութիւնո  
ամենայն առարկայից յամսեանն

18 ամիս եցոյց՝ վարուքագի-  
մութիւն այսպիսի.

1. Ի կրօնապիտութեան

2. Ի Հայոց լեզուի

3. Ի Բուռոց լեզուի

4. Ի թուարանութեան

5. Ի պատմութեան Հայոց և յաշխար-  
հագրութեան Հայաստանի6. Ի պատմութեան Ուռուաց և յաշխար-  
հագրութեան Ուռուաստանի

7. Ի բնական պատմութեան

8. Ցընդհանուր աշխարհագրութեան

9. Ցերպեցողութեան

10. Ի վալել չագրութեան

11. Ի գծագրութեան

Որոյ վասն և տուաւ նմա

վկայագիրս այս կնքով Աւսումնարանիս յամի 18 յամսեանն  
ի (այս անուն +աղայի համ գէղջ):

Առողջապահութեան Հագուբընը և  
Տէսչի վահապահ սահման:

ՕՐԻՆԱԿ թ. 8

## ԳԱՅԱԳԻՒԹԻՒՆ

Աշակերտուհի եկեղեցական-Ծխական միզասեան Ուսումնաբանի Օրիորդաց (այս անուն +ազածի կամ գեղջ) (ասպ նշանակելի էն անուն, հայրանուն և մականուն, վիճակի կամ կաշ-ն, պեղի ժննութեան, դարձի, ամիս և օք ժննութեան), ամաց, եմուտ յնւումնաբան յամի 18 յ բաժանումն և ի վերջին հարցաքննութիւնս ամենայն առարկայից յամսեանն

18 ամիս, եցոյց՝

Վարուք յառաջադիմութիւն այսպիսի,

1. Ի կրօնագիտութեան

2. Ի Հայոց լեզուի

3. Ի Բուսաց լեզուի

4. Ի թուարանութեան

5. Ի վայելչագրութեան

6. Ի զծագրութեան

7. Ի Ճեռագործի

8. Ի Ցերգեցողութեան

Օրոյ վասն և տուաւ նմա

Վկայագիրու այս կնքով Ուսումնաբանիս յամի 18 յամսեանն  
ի (այս անուն +ազածի կամ գեղջ):

Ապարագը-նի-ն Հագոբայը-ն-ոց և  
Տէսչի կամ առաջ սահ-սահ:

Օրինակ թ. 8.

Վ. Կ. Յ. Ա. Գ. Ի. Բ.

Աշակերտուհի Եկեղեցական-Ծխական երկրասեան Ուսումնաբանի Օրինարդաց (այս անուն +ապաէի համ գեղջ) (առաջ նշանակվէլ են անուն, հայրանուն և մահանուն, միհաէ համ ինը-ն, աւելի ծննդեան, առըի, ամիս և օր ծննդեան), ամաց, եմուտ յՈւսումնաբան յամի 18 յ բաժանումն գասարանի և ի վերջին հարցաքննութիւնս ամենայն տարկայից յամնեանն 18 ամիս եցոյց՝ վարուք յառաջազիմութիւն այսպիսի.

1. Ի կրօնագիտութեան
2. Ի Հայոց լեզուի
3. Ի Ռուսաց լեզուի
4. Ի թուաբանութեան
5. Ի պատմութեան Հայոց և յաշ-Հագրութեան Հայաստանի
6. Ի պատմութեան Ռուսաց և յաշ-խարհագրութեան Ռուսաստանի
7. Ցընդհանուր պատմութեան
8. Ցընդհանուր աշխարհագրութեան
9. Ի բնական պատմութեան
10. Ի վայելչագրութեան
11. Ցերգեցողութեան
12. Ի գծագրութեան
13. Ի ձեռագործի

Որոյ վասն և տուաւ նմա,

վկայագիրոյ այո կնքով Ուսումնաբանիո յամի 18 յամ-սեանն ի (այս անուն +ապաէի համ գեղջ) : Սահմանադրութեան Հագաբարձուոց և Տեսչի համ առաջ-ցոյն :

Աւուրք Եկեղեցական և Կայսերական տօնից, յորո պարտին աշակերտուհիք և աշակերտք դպրոցաց Հայոց ազատս լինիլ ի պարագմանց գտառց և յաճախել յեկեղեցիս:

## ՏՕՆՔ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ.

- Ա. 5. 6. 7. և 13 Յունվարի տօնք Ծննդեան, Յայտնութեան և Անուանակոչութեան Տեառն Յիսուսի Քրիստոսի:  
 Բ. Փետրվարի 14 տօն Քառասնօրեայ Գալստեան Տեառն ի Տաճարն:  
 Գ. Տօն Սրբոց Արքանանց զօրավարացն Հայոց:  
 Դ. Ապրիլի 7, տօն Աւետեաց Ս. Առտուածածնի:  
 Ե. Տօն մտին ի վիրապն Ս. Գրիգորի Լուսաւորչի:  
 Զ. Տօն ելիցն ի վիրապէ Ս. Գրիգորի Լուսաւորի:  
 Է. Տօն գիւտի Նշուարաց Ս. Գրիգորի Լուսաւորչի:  
 Ը. Տօն սրբոց Խարքմանցացն Սահակոյ և Մեսրո'քայ Հայրապետացն:  
 Թ. Տօն սրբազն Առաքելոյն Թագէսոսի և սրբուհւոյ Սանդիտոյ կուսին:  
 Ժ. Տօն սրբոց Նախկին լուսաւորչացն Հայաստանի սրբազն առաքելոցն Թագէսոսի և Քարգուղիմէսոսի:  
 ԺԱ. Սեպտ. 8, տօն Ծննդեան Ս. Աստուածածնի ի յԱննայէ:  
 ԺԲ. Նոյեմբ. 21, տօն ընծայման Ս. Աստուածածնի ի տաճարն:  
 ԺԳ. Տօն Յղութեան Ս. Աստուածածնի ի յԱննայէ:  
 ԺԴ. Տօն անուանակոչութեան Ա. Եհակիառ Հայրապետի ամենայն Հայոց  
 Տ. Տ. Մահարայ. որ կատարի ի տօնի Սրբոց Հարցն եղիպատացւոց Պօղայ  
 Մակարայ և լու:  
 ԺԵ. Նոյեմբ. 10. Տօն տարեգարձի օծման Ա. Եհակիառ Հայրապետի ա-  
 մենայն Հայոց Տ. Տ. Մահարայ:

## ՏՕՆՔ ԿԱՅՍԵՐԵԿԱՆՔ.

- Ա. Փետրվարի 26 Ծնունդ Ն. Կ. Մ. Աղէքսանդր Աղէքսանդրովչի,  
 Բ. Մարտի 2 գահակալութիւն Ն. Կ. Մ. Աղէքսանդր Աղէքսանդրովչի,  
 Գ. Մայիսի 6 Ծնունդ Ն. Կ. Բ. Ժառանդի Կայսեր Նիկոլայ Աղէք-  
 սանդրովչի:  
 Դ. Մայիս 15 Թագաղբութիւն Նողին Կ. Մեծութեանց Օգոստ. Կայսեր  
 Աղէքսանդր Գ. Աղէքսանդրովչի և կայսերուհւոյ Մարիայ Գեօգորովնայի:  
 Ե. Յուլիս 22 Անուանակոչութիւն Կայսրուհւոյ Մարիայ Գեօգորովնայի:  
 Զ. Օգոստ 30. Անուանակոչութիւն Օգոստափառ Կայսեր Աղէքսանդր  
 Աղէքսանդրովչի:  
 Է. Նոյեմբ. 14 Ծնունդ Կայսրուհւոյ Մարիայ Գեօգորովնայի:  
 Ը. Դեկտ. 6. Անուանակոչութիւն Ն. Կ. Բ. Ժառանդի Կայսեր Նիկո-  
 լայ Աղէքսանդրովչի: